

Հայաստանի հանրապետության
Կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 03 Ն
19/01/2010

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԳԻ
2008 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՐՏԻ 11-Ի ԹԻՎ 68Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» 127-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի ««Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը հաստատելու մասին» թիվ 68 Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի 50-րդ կետի

1) 1-ին ենթակետը լրացնել «Ժե» պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ժե. բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ»,

2) 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

3) կետը լրացնել 14.1-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«14.1) այլ անձանց կողմից թողարկողի արժեթղթերը հանձնելու առաջարկի իրականացումը»,»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Արթուր Ջավադյան

2010 թ. հունվարի 21
ք. Երևան